

Որ կարծես թէ թաւալելով կ'իջնէ վար
Յաւիտենի անծայրածիր խորութեան
Անդունդներէն դահալէժ :

Գարնան հովովն անուշիկ,
Ծիծաղ ու երգ շրթունքներն՝
Կը դեղուն նաւն ալեծով :

Տարափին տակ լարերուն
Որ սրտէ սիրտ կը ծաւալի մեղրակաթ,
Աչքեր սիրով կը դուզուին
Որոնց մէջէն կը վառի
Խարոյկն էրոս աստուածին...:
Կը ծրփայ նաւն աղմուկով
Կայթառօնին հեշտանքին մէջ մրրկա-
Լոյս կուսաններ վարսաղեղ

Օրօրանէն դիւերուն
Նաւն իմ երրորդ արթննայ,
Ու այգին մէջ հեղաշունչ
Ծաղկի հրապոյրն անհունին՝
Պիտի խայտայ աչքս նորէն
Կապոյտներու ցոլացումով անդորրիչ :
1954 Ն. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՇԵԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Հիմա որ դուն ա'լ չես հնչեր հայ տղաներու
Շրթունքին վրայ, հիմա որ դուն
Մօտ ես ահա՛ ճրարդի պէս շիջանելու,
Կը մրմնջես հին աղօթքի նրման տրոտում :

Բաւերդ հողիս կ'արբեցընեն՝ սափորի մէջ
Մոռցըլած հին գինիի պէս,
Քու խորհուրդիդ ոսկեճաճանչ բուրբառն անչէջ
Սիրոյս կրակով դեռ կը մրխայ կարօտակէլ :

Ես կը դողամ վրադ, ինչպէս հողհատոր
Մէկու մը՝ որ ինձմէ ծընած,
Իմ արիւնիս մէկ արձաղանդն է հեռաւոր
Աստուածազեղ ժամանակի մը լուսարբած :

Բայց դուն կարծես իր ակունքին դարձած աղբիւր,
Ոչ մէկ չիթ ես կորսնցուցած,
Եւ շրթունքիս կ'ըլլաս երգում, կ'ըլլաս համբոյր,
Սուրբին խնկոտ գերեզմանէն վարդ մը ծաղկած...:

ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ

ԶԼՆՔԻ ՏՍԿ

ԽՐԱՄԱՏՆԵՐՈՒ ՄԷՋ

Ուր Օստում գետը կը լայնայ, նետուն-
լով լեռներուն կողերն ի վեր՝ մենք հաս-
տատած ենք մեր դիրքերը : Պէրաթը մեղ-
մէ եօթը քիլոմէրը հեռու է, Թիւրանայի
ուղղութեամբ : Կէսօրուան դէմ, յաղթա-
մարմին գոմէշներ կու գան տապալակիլ
տղամարտն աւազին մէջ, իրենց յոյնած
նալուածքները պտրտցնելով ջրիներուն
եւ ձիերուն վրայ, որոնք անյաղօրէն կը
խմեն գետին գեղին ջուրը :

Թշնամի սաւառնակները կը հասնին ե-
րեք տարբեր ուղղութեամբ, աջէն եւ ձա-
խէն, քերելով լեռներուն բարձունքները :
մէջտեղէն, հանդարտօրէն սահելով հա-
կոնեայ լեռնաշղթաներուն միջեւ տա-
րածուած պարապութեան վերեւ, ուր
դիրք բռնած են մահուան ուխտեալներն
ու լեռնային թնդանօթածիւղներու իմ
խումբս : Քիչ անդին վրանարնակ հիւան-
դանոցն է, անկէ հաղիւ երկու քիլոմէր
հեռաւորութեամբ հակօդային թնդանօթ-
ները կը գտնուին, շուրջըրտուած աւազի
պարկերով : Պէրաթը անջատուած է մեղ-
մէ, որուն ձորամէջ կամուրջին դէմ, պա-
տերազմի ամբողջ տեւողութեան, անդ-
լիացի եւ յոյն սաւառնորդները պիտի նե-
տեն իրենց ուղիքները, առանց երբեք կա-
րենալու դայն օդը հանել :

Մեր դիրքերուն ոմբակոծութիւնը գը-
րեթէ ամէնօրեայ է : Թշնամի սաւառնակ-
ները կը յառաջանան գիշատիչ թռչուննե-
րու նման, լայն բացած իրենց մետաղե-
թեւերը, անօրինակ խաժամուժով լեցնե-
լով լեռ, ձոր եւ անտառ :

Երբ հաղիւ կ'երեւին անոնք լեռներուն
վերեւ՝ կը սկսին որոտալ հակօդային
թնդանօթները, կրակելով աջ ու ձախ, ի-
րենց իսկ յարուցած ճնշումէն տենդալին
Դողալով հրաչէկ հողին վրայ :

Տարօրինակ բան՝ սաւառնակները վա-
խի ոչ մէկ նշան ցոյց կու տան : Միշտ կը
յառաջանան, չչեղելով երբեք իրենց ու-
ղիւղէն, մինչ ուղիքները կը պայթին իրենց
շուրջ, մերթ կարմիր ու մերթ ալ ճերմակ
բոցեր սփռելով միապաղաղ կապոյտին
դէմ : Ու երբ կը հասնին մեր դիրքերուն
վրայ՝ ցոռկները յանկարծ կ'ուղղեն դէ-
պի Օստումի ջուրերը, խեղացնոր արա-
զութեամբ դահալիթելով դէպի մեզ, կը-
րակելով անխնայ մեր դիրքերը, ապա
նոյնքան արագութեամբ իրենց ցոռկները
կը նետեն դէպի ետ, կը բարձրանան լեռ-
ներուն կողերն ի վեր, չունչ կ'առնեն, կը
թեքին աջ ու ձախ, մերթ տապալակելով
վիրաւորուած անասուններու նման, մերթ
զուգահեռական սաւառնակով Օստումի ջու-
րերուն, ու յետոյ դարձեալ կը դահալիթ-
ելին դէպի մեզ, բարձրադաղակ ոռնալով,
այս անգամ բանալով իրենց ծանր գնդա-
ցիրները, որոնց հաստիկէ գնդակները կը
պայթին չոր հողին վրայ տեղատարափ
անձրեւի փաթիլներուն նման, ցատկոտե-
լով անհրապոյր ժայռերուն դէմ :

Զինուորները առանց չունչ առնելու կը
կրակեն, անընդհատ լեցնելով հրացան-
ները : Ծանր գնդացիներու սպասեակները
կը շարժին աներեւակայելի արագու-
թեամբ, իրենց գէնքերը անգամ մը տեղա-
ւորելով հոս, ապա հոն, անոնց հրեղէն
բերանները ուղղելով միշտ դէպի թշնա-
մին, որ պտոյտ կու գայ իրենց վրայ, գի-
շատիչ թռչուններու նման :

Հակօդային թնդանօթները, որ վայր-
կեան մը լուծ էին չունչ տալու համար
իրենց միաքող բերաններուն՝ դարձեալ
կը նետուն պայքարին մէջ : Սպաները ոտ-
քի են, հատակոտոր եւ ջրային հրամաննե-
րով կը յորդորեն զինուորները, մերթ կը

ծովին, ծովնկի կու գան: Թշնամիին ոռոմ-
բերը կը պայթին անոնց շուրջ: Հաստա-
փոր պարկերէն շատեր աղբիւրի նման կը
ծորեն իրենց աւաղը: Սպաները, առանց
շունչ առնելու՝ կը շարունակեն հրաման
արձակել, քրտնած, իրենց հրաշալի երի-
տասարդութիւնը պատնէշած ամենազօր
մահուան դէմ:

Ահաւասիկ, երկնային ոռոմբին յարու-
ցած հրդեհը կը ճարակի մերձակայ ան-
տառին մէջ: Դէպ երկինք բարձրացող ա-
ղաչաւոր բազուկներուն նման, կրակին լե-
զունները կը ձկտին դէպի վեր, մերթ ցան-
ուցիր եւ մերթ ի մի հաւաքուելով, երբ
հովը, Պէրաթի սեւաթորմի լեռնահովտին
հովը, կ'իջնէ ծառախիտ բարձունքներու
փապարներէն, տակնովբայ ընելու հա-
մար խրամատ ու վրան, անտառ ու դետ,
իր մահահոտ շունչին մէջ տառապեցնե-
լով ամէն ինչ որ կը ջանայ փրկել իր խեղճ
կեանքը մահուան ճիրաններէն:

Պէրաթի հովտին հովը արեան հոտ ու-
նի, ու այսօր ալ, ինչպէս գրեթէ միշտ,
ան կը նետուի զարհուրած Օսսուի դէմ,
կը սեղմէ դայն իր կրակէ բազուկներուն
մէջ, ու ատելալառ զայրութեով մը, որուն
արմատները կը գտնուին երկնի բովերուն
մէջ՝ կը խորտակէ դայն սոսկալիթխար
ապառաժներուն դէմ: Ահարկու դետը, որ
կը ճանչնայ դաշտադետիններու աղատու-
թիւնն ու անդնդախոր մթութիւններու ա-
ռանձնութիւնը, անզօր ու որբացած, կու
լայ ու կը հեծկլտայ, կծկուած ինքն իր
վրայ, մինչ Պէրաթի անկարելի հովը,
կը շարունակէ ասպատակել հոս ու հոն,
դէմքը ուռած, իր մտտ շրթներէն կաթե-
ցընելով փրփուր եւ արիւն:

Հովուն վայրէնը ներկայ է մեր մէջ,
ինչպէս ներկայ են մեր մէջ արհաւիրքն ու
մահը, սակայն մեր մէջ այլեւս դոյութիւն
չունին այն բոլոր քնքշութիւնները՝ որոնք
կ'երգներանդեն սիրոյ աշխարհը: Մենք
երիտասարդներ ենք մահուան համար:

Լուսաթորմի այն երազները, որոնք այն-
քան փափկօրէն կը ցոլցան կենսայորդ
սրտերու երկնակամարին վրայ՝ այլեւս
լքած են մեզ, ու մենք հիմա, երկնցած
մեր դէնքերուն կողքին, կը պայքարինք
սրբազան խէշալի մը համար որուն մար-
մարակերտ տաճարին սիւններուն առջեւ կը
բարձրանան քսանհինգամեայ կեանքերու
անշնչացած մարմինները, որոնց շուրջ կը
հեծկլտան բոլոր սղակիր մայրերը, որոնց
որմերուն տակ կը կանգնին, լուռ ու
մունջ, բոլոր անմխիթար հարսերը:

Այս կեանքը շարժւորէ ի վեր է որ կը
տեւէ: Քնատութիւնը անտանելի է: Սպա-
ները նիհարցած են, ջորները ծիւրած
տաժանակիր աշխատանքէն, զինուորները
անօթի եւ մոռալ:

Միշտ նոյն խրամատները, ապա ազատ
տափաստանը, որ կ'երթայ հալիլ յողնա-
խուր գետին մէջ, որուն աղմուկը կը ջը-
ղայնացնէ մեզ:

Գիշեր է: Հսկիչ սպային ձայնը կը ճեղ-
քէ խաւարը:

— Ամէն ոք կրակի դծին վրայ... ան-
ցուցէ՛ք սաղաւարտները...:

Երկինքը մութ է. ոչ ասող կայ եւ ոչ
ալ լուսին: Խաւարին մէջ կու լայ Օսսու-
մը, զարնուելով ժայռերուն:

Մեր դիրքերուն վերեւ թշնամի սաւառ-
նակներուն աղմուկը հետզհետէ կը լայն-
նայ, կը ճշգուի: Նման իր խուլ անձաւնե-
րուն մէջ շաշող ծովուն մոլորութիւն, ամ-
պամած երկնի քարայրներուն մէջ կ'ար-
ձագանդեն օդապարիկներու խժալուր ա-
լիքները: Ամէն ինչ չարադուշակ կենդա-
նութիւն մը կը ստանայ յանկարծ: Խրա-
մատները կ'արթնան: Սաւառնակները կը
շրջին անդադար, որոնց յարուցած ժխորը
կը մտնէ մեր դանկերէն ներս, պեղելով
մեր տխուր մտածումները:

Յանկարծ երկինքը կը ճերմկնայ: Լոյսի
կոհակներ, նման ոլորադեղ փրփուրնե-
րու՝ կը յամենան ժայռերուն վրայ:

Ու այս յեղակարծ լուսաւորումը նման
է օձադալար այն փայլատակումներուն՝
որոնք կը կանխեն անապատներուն վրայ
փրթող ամպրոպները, երբ բարձրագահ
երկնքին մէկ մեծագոյն մասը կը պայծա-
ռանայ յանկարծ, իր դողահար տարա-
ծութեան վրայ ուրուաղծելով յաղթա-
մարմին ամպերու անշարժացած դէպերը,
մինչ ծարաւահիւծ տափաստանը կը դե-
զիննայ ու ապշահար արմաւենիները կը
սարսոսան կենդանական անօրինակ դողով
մը:

Հրթիռներն են: Կատաղութեան ախտէն
բռնուած շուններու նմանող անապոյտն
հրթիռները: Երկնածոր լոյսը կը լայն-
նայ, կը տարածուի ափէ ափ: Օսսուի
հիմա դժային է ու յստակ մեր առջեւ,
կենդանի մարմին մը, որ կը հեծէ ու կը
զալարուի: Ժայռերը ստուեր չունին:

Ու յանկարծ դարձեալ կ'իջնեն ոռոմբե-
րը, այս անգամ կատաղի, մոլեղին: Տա-
ռապակոծ մրճահարում մը, որ կը դողա-
ցընէ տափաստանը, որ համակ ատելու-
թիւն է ու զայրոյթ, մարդկային արեան
անարեւ վիհերէն ժայթքող քէն ու ոխ:

Խրամատներէն կը պատասխանեն զըն-
դացիրները: Մենամարտը կը տաքնայ, կը
վազէ փոսէ փոս, թաքստոցէ թաքստոց,
ամրոցէ ամրոց, դիրքէ՝ դիրք: Բոլորա-
նիստ պարկերուն միջեւ հանդիպող հակո-
ղային թնդանօթները դարձեալ կը նետ-
ուին պայքարի մէջ, իրենց հրաշէկ բե-
րանները դողացնելով կաթի զոյն օդին
մէջ:

Այս անգամ եւս, անոնք տէրն ու տի-
րականն են զիշերուան մենամարտին, ար-
քայալայել եւ հզօր, որոնք տարօրինակ
հեղինակութիւն մը կը վայելեն զինուո-
րականներուն մօտ, պատկանելով զինա-
մթերքի աղնուական դասակարգին, տէր
անկախ նկարագրի, հաստատակամ եւ
վճռական: Երբ, մենամարտին ամէնէն
ճակատադրական մէկ պահուն, անոնք
կ'իջնեն ասպարէզ՝ շրջակայ բոլոր գէն-
քերը կը լուեն յարգալիք եւ ահաբեկ, ռազ-
մադաշտը ձգելով հզօրագոյնին, որ իր
բոլոր վեհութիւնն ու զօրութիւնը ցուցա-
դրելու համար պէտք ունի իւրաքանչեւ
կրկէսի մը, յորում փայլի իր բոլոր ոյժն
ու հեղինակութիւնը:

Աղմուկը կը բարձրանայ հողէն, կ'իջնէ
երկնքէն: Համազարկները նշան կ'առնեն
դէպի փախստական սաւառնակները: Կը-
րակի բոլոր բերանները բաց են: Այս պա-
հուս ոչ ոք չի մտածեր մահուան եւ կեան-
քի մասին, ամէն ոք տարուած է զարհու-
րելի ռազմախաղէն, որ վաղը նոր շիրիմ-
ների պիտի բանայ մօտակայ զինուորական
զերեզմանատան մէջ, ուր երիտասարդ
քահանան, խաչը ձեռքը, աղօթք մը պի-
տի մրմնջէ բոլոր անոնց հողիներուն հա-
մար որոնք հողին պիտի յանձնուին, մինչ
պիտի հնչեն փողերը եւ դրօշները խոնար-
հին առ յաւէտ չիջած երիտասարդ կեան-
քերու վրայ:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ

